

ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԱԿԱՆ

ԱՄԵՆ ԱՓՈՔՐԸ.

(Պետրով Բախնայից)

Ղուկասու Աւետարանում (ԺԶ. 1—9) կայ անիրաւ դատաւորի առակը, որը շատերին է շփոթեցնում*) այնտեղ ասած է, որ անիրաւ դատաւորը վատնեց իւր տիրոջ ունեցուածքը. և երբ բացուեց այդ, նա կանչեց իւր տիրոջ պարտապաններին և հրամայեց մուրհակները նորէն գրել. — ով հարիւր էր պարտական, պէտք է գրէր յիսուն կամ ութսուն: Ապա՝ Աւետարանումն ասած է. — «Եւ դովեց տէրն անիրաւ տնտեսին, որովհետեւ նա իմաստուն վարուեց»: Վերջն էլ Փրկիչն աւելացնում է. — «Եւ ես կասեմ ձեզ, անիրաւ մամոնայով ձեզ համար քարեկամներ ձեռք բերէք, որպէսզի, երբ աղքատանաք, ընդունեն ձեզ իրանց յաւիտենական յարկերում»:

«Անիրաւ մամոնայով քարեկամներ ձեռք բերէք», — ահա այս խօսքերը, որոնք շփոթեցնում են Աւետարանը կարգացողներին, և սակայն հենց այդ խօսքերն են առակի միտքը հասկանալու բանալին: Ի՞նչ բան է անիրաւ մամոնան: Ղուկասու Աւետարանի ԺԲ գլխում կայ մի այլ առակ անմիտ հարստի մասին: Նորա անդերն ու տափերը տուին հացի շատ հարուստ բերք, և չունէր տեղ, ուր ամբարէր: Նա ուրիշների մասին չմտածեց, այլ ասաց ինքն իրան. — «Ո՞վ իմ անձն, շատ բարիք ունիս, երկար ժամանակ բաւական է քեզ այն, կեր, խմիր և ուրախ եղիր»: Ասում է նորան Աստուած, — «անմիտ. այս գիշեր հողիդ կառնեն և

*) Նախ Աւետարանում կարդալ այդ առակն և ապա թէ սոյն գլուխը:

ում կմնայ այդ ամենքն: Եւ Աւետարանն ասում է, «այդպէս էլ նա, ով իւր անձի համար է գանձում—ամբարում, այլ ոչ յԱստուած հարստանում» (Ղուկ. ԺԲ. 16—21.)

Այստեղից երևում է, որ երկու կերպ հարստանալ կայ,—իւր անձի համար և Աստծու համար: Մէկն ընկած է իշխանութեան, պատուի, հարստութեան և հռչակի յետեից, նորա բոլոր ընդունակութիւնները գործադրում են իւր անձի համար: Նա գուցէ ոչ մի շարիք էլ չգործէ, սակայն նորա դժբաղատութիւնը հէնց այն է, որ քարիք էլ չէ զործում: Իւր անձի բարօրութեան համար նա գործ է դնում շատ եռանդ և աշխատանք. իսկ Աստծու զործի համար մնաւն անգամ չէ շարժում: Միւսն՝ իւր ամբողջ կեանքում մտածում է Աստծու արդարութեան մասին, գործում է սիրով յաղթանակի համար կեանքի մէջ: Նա ինքը չունի անկիւն գլուխը դնելու և ոչ էլ մի կտոր հաց-բայց Աստծու տունը մարդկանց սրտերում դարդարում է նա հրաշայի կերպով, ավետարանական ցորենի հատիկներն է սերմանում մարդկանց հոգիներում: Թէև անձամբ աղքատ, սակայն յԱստուած է հարստանում նա անդառար:

Ինչպէս ենք հարստանում մենք, Մենք ամենքս Աստծու տնտեսներն ենք: Աստուած, աշխարհի Տէրը մեզ ուղարկում է կեանքը՝ որպէս Իւր ազարակը, որ մենք շինենք այդ: Ո՞ւմն ենք ծառայում, Աճեցնում ենք արդարութիւնը, թէ սեր անձի բարօրութիւնն ենք շինում օգտուելով Աստծու պարգևներից, որ տուած է մեզ Աստծու գործի համար: Երբ ժամանակը գայ՝ ինչ հաշիւ ենք տալու Տանտիրոջը: Լինում են կեանքում այնպիսի դէպքեր, որոնք պինտ ցնցում, թափ են տալիս մարդուն, այնպէս, որ հոգին տիրող ամեն մէկ—մառախուղ ցնդում, չքանում են, որպէս աշխարհ է սթափուում: Եւ այդ ժամանակ մենք ստիպուած ենք մտածել, ստուգել մեր ամեն մի քայլը, մեր ամբողջ կեանքի հաշիւը տալ: Ամուսն միայն, որ երբեմն մենք քնում ենք այնպէս խորը, որ իսկոյն չեն կարող զարթեցնել մեզ. կան և, որոնք այնպէս խորն են մառախալել, որ հեշտութեամբ չես հասնիլ մինչև կենդանի մարմինը, մինչև կեն-

դանի հոգին Ափսոս, որ շատ-շատ անգամ մենք ուշ ենք քաթափուում, զարթնում ֆորձեցէք 50—60 տարեկան հասակում կարգալ-գրել սովորել, ինչ որ երեխան սովորում է խաղալով, հեշտութեամբ՝ ձեզ կյաջողութի ծանր աշխատանքով, շատ դժուարութեամբ,—ուղեղն այն չէ, ծերացել է, մատներն էլ կոշտացել են, չեն ծռւում, և տառերի տեղ ազատի ճանկեր են խաղիսղում։ Ինչպէս որ մարմինը տարիքի հետ կորցնում է իւր առաձգականութիւնը, ճկունութիւնը, այնպէս էլ կորչում է հոգու թարմութիւնը, զգայնութիւնն ու տպաւորելիութիւնը։ Որքան ուշ, այնքան դժուար է կտորել իրեն և կեանքն ըստ նորոյ կարգաւորել, երբ սառում է երկաթի շերտե, այլևս դժուար է կռել այն-ծեծել։ Գորա համար է, որ անիրաւ տնտեսը հաշիւ տալու վերաբերմամբ խորհում է.—«Ի՞նչ անեմ։ Գործել չեմ կորող, մուրալ՝ ամաչում եմ»։ Կեանքն ի նորոյ սկսել՝ արդէն ուշ է,—այդ բանին ընդունակ չէ այլևս։ հոգու քոլոր հարստութիւնը (Աստծու պարգևները) վատնել է, հնարաւորութիւն էլ չունի ինքն իրենից որ եւ է բարիք գործել։

Մարդիկ իրենց կեանքում այնքան չարիք են գիղել, ամենատեսակ անարդարութեանց այնպիսի կոյտեր ամբարել, որ շատ աշխատանք ու եռանդ է հարկաւոր, որպէսզի կարելի լինի այդ բոլորը քանդել, դէն թափել և հասնել տակը թաղուած մաքուր բարիքին։ Այդ անելու համար անիրաւ տնտեսն ուժ չունի, բոլորը վատնել է։ Նա պարզի պարզոյ խոստովանում է, որ «գործել չէ կարող»։ Իսկ այնպիսի կսպիտ շռայլումն—վատնումից յետոյ սղորմութիւն խնդրել, դիմել իւր կարիքի համար նորան, Որին առաջ, իւր ամբողջ կէանքում միմիայն թիկունքն էր դարձրել՝ ամաչում է։ Ուրեմն ինչպէս անել, Որտեղ փրկութիւն որոնել։ Ո՞ւր գտնել գտնէ մի փոքրիկ քար, որին յենուէր։ Գտնէ մի բարակ ցողուն, որից բռնէր, պահուէր։ Առակի վերջաբանը տալիս է դորան պատասխան, ցոյց տալիս մեզ, անիրաւ տնտեսներիս ծայր-միջոցը, տալիս մեզ յենարան։

Աւետարանական խրատներից կան, որ մատնացոյց են անում ամենամեծ պահանջները, օր.—«եղէք կատարեալ,

որպէս կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը» (Մտթ. Ե. 48),
 կան և, որ ընդհակառակը, ցոյց են տալիս սահմանը, որից
 ցածր լինել—զիջել չի կարելի, — որոշում է չափ, որից դէնը,
 եթէ այդ չափն էլ անցնենք, ամենակերպ լուսոյ վաղեանն
 է, տիրում է կատարեալ խաւար։ Պարզաբանենք օրինա-
 կով. — Պօղոս առաքելը գրում է. «Հանապաղ աղօթեցէք»,
 ունիցէք ձեր մէջ աղօթելու մշտական տրամագրութիւն.
 թող ձեր ամբողջ կեանքը լինի անժայր ծառայութիւն
 Աստծուն և նորա արգարութեանը երկրի վերայ։ Դա է
 ամենամեծ պահանջը, դրուած քրիստոնեաների վերայ։
 Հրէաներին այլ պատուիրան էր դրուած. — «վեց օր գործիր
 քո քոլոր գործերդ, իսկ եօթներորդ օրը, շաբաթը նստիւր
 ք» Տէր—Աստծուն»։ Քեզ՝ վեց օր. իսկ Աստծուն—միայն
 մէկ օր։ Դա արդէն ծայր—սահմանն է, եթէ մարդ այդ էլ
 չպահէ, ուրեմն նա ձեռքը ծղօտի էլ չի յենում, որպէսզի
 պահուի առ Աստուած։ Ահա հէնց այդպիսի ամենափոքր
 պահանջը—պատուէրն է ակնարկում առակը։ Անիրաւ
 տնտեսն այնպիսի խիտ մացառուտի մէջ էր խրուած, որ
 անկարող էր դուրս դալ։ Սակայն այդ դրութեան մէջ իսկ
 կարող էր նա բարուն ծառայել. — նա կարող էր նախա-
 զգուշացնել այլոց, որ նոքա չգնան այն ճանապարհով, որ
 իրեն այդտեղ հասցրեց։ Ամենազարհուրելին այն է մարդ-
 կանց մէջ, որ մէկը խեղդուելով կեանքի յորձանուտ խոր-
 խորատում, այլոց էլ ձգում—տանում է իւր հետ։

Քրիստոսի աշակերտի ամենամեծ պարտաւորութիւնն է
 նախ գործել և ապա իւր օրինակով ուսուցանել այլոց կա-
 տարել Աստծու կամքը, եթէ նա, այդ աշակերտը չի կարող
 լինել առաջնորդող, չունի այնքան կարողութիւն, որ ինքն
 առաջին գնայ, թող գոնէ մթութեան մէջ խաբխափողներ
 համար փարոս դառնայ, լուսատու նշան Աստծու արդա-
 րութեան բարձունքի վերայ։ Եթէ ոչ գործով, գոնէ խօս-
 քով, դէպի բարին ջերմ կոչով զարթեցնեն մարդկային
 խիղճը։

Իայց կարող է պատահել, որ անիրաւ տնտեսի պէս
 մարդ չունենայ կարողութիւն ոչ բարեւ գործելու, ոչ էլ

կոչ անելու գէպի բարին։ Ի՞նչ անել այդ գէպում։ Այդ մարդը մի բանի պէտք կգայ Աստծու ազարագում։ «Այն, պէտքը կգայ», պատասխանում է առակը։ Եթէ նա չի կարող մեծացնել բարին, գոնէ թող փոքրացնէ չարիքը, թող նա իւր դառը փորձով զգուշացնէ այլոց այն ճանապարհից, որն իրեն բերեց մի այդպիսի զարհուրելի վախճանից։

Ժողովրդական պատմութեան մէկում ասում է, որ մի գիւղ շատ լաւ բերք ունեցաւ, իսկ շուրջը սով էր։ Բաղդաւոր գիւղացիները թխում էին իւղաբլիթ, բրագա (կորեկաջուր) եփում, ուրախանում։ Ծերունի Ֆէզոս պապիկն արգելում էր. «չի կարելի հիմա արող կամ բրագա խմել, իւղաբլիթ ուտել։ Դժբաղտութեան մէջ գտնուող հարեաններին կարեկցել է հարկաւոր»։ Գիւղացիք և նոցա ճահեղները բարկանում էին — «Ասում ես չի կարելի, Ջահել մամանակդ ինչէր էիր անում։ Յիշում ես Այն կարելի էր»։

— Յիշում եմ, եղբարք, յիշում եմ։ Վատ էի ապրում։ Դուք էլ ինձ պէս մի անէք։ Աւելի լաւ կեանք վարեցէք, որպէսզի մարդիկ ձեր վատը չյիշեն։ Ինձ պէս մի անէք — ասում էր Ֆէզոսը։ Աստծու առաջ իմ ունեցած պարտքերի երկու ցուցակը դուք էլ մի ունենաք։ Այդ միշտ շալակին ունենալը ծանր բան է։ Աշխատեցէք, որ այդ ցուցակը ոչքան կարելի է կարճ լինի։ Ինձ նայած՝ ինքներդ էլ կարող էք դատել, — գարշելի կեանք անցնելը լաւ բան է։ Մարդ ինքն էլ զգում է իրենից։ Հեռացէք շարից, քանի ուշ չէ։ Քանի կայ հնարաւորութիւն, քանի դեռ չեն խաղանացել — կոշտացել ձեր հոգիները՝ փոքրացրէք ճանտիրովը տալիք ձեր պարքերի ցուցակը, դէն ձգեցէք հոգու բռնը։ ջանք դրէք ձեր վերայ — ձեր թուլութիւնից աշխատեցէք ազատուել։

— Քո ցուցակում կայ հարիւր չափ անարդարութիւն, ասում է մէկին Ֆէզոսը, գոնէ կէսը դէն ձգիր, թող մնայ յիսուն։ Իսկ դու, որ անկարող ես անմիջապէս միկնոյնն անել, ասում է միւսին, գոնէ 100-ից իջիր 80-ի։ Չարից մի քայլ հեռու — Աստծուն աւելի կմօտենաս։

Ահա այդպէս էր Ֆէդոսն իւր անարատ կեանքից բարի դատեր տալիս մարդկանց: Եւ նոցա բարի գործերը Ֆէդոսի համար լաւ բարեկամներ, պաշտպան ու բարեխօս կդառնան Աստծու առաջ:

Ուրեմն ճանաչեցէք որն է Աստծու կամքը: Գտնելով այն՝ ծառայեցէք այդ կամքին և այլոց էլ սովորեցրէք նոյնն անել: Իսկ եթէ Աստծու արդարութիւնը կատարողներ չէք կարող լինել, գոնէ կարապետները դարձէք. ազնայէք, քարոզեցէք թէ մտեցել է Աստծու Արքայութիւնը: Ծայրայեղ դէպքում՝ գոնէ ձեր մերձաւորներին պահպանեցէք շարից: Չէք շատացնում Աստծու աշխարհում՝ արդարի հարստութիւնը, չէք բազմացնում բարին, գոնէ ձեր փշաղած կեանքի անարդար հարստութեամբ և դառը փորձով աշխատեցէք փոքրացնել շարիքը: Մի բանով գոնէ օգուտ բերէք Աստուծոյ գործին երկրի վերայ:

Թարգ. Մարկոս Բ. Տէր Մկրտչեան

